ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլ, 2019 թվականի № 18-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 52-Լ ՈՐՈՇՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆԱԽԱՀԱՇՎԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 67-րդ ու 84-րդ հոդվածների և «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») կանոնադրության պահանջները՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի ««Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին» N 52-Լ որոշման № 1 և № 2 հավելվածները փոփոխել՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար № 1 և № 2 հավելվածների:

2. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի ««Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի վարչակազմակերպական կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին» N 52-Լ որոշման № 2 հավելվածը փոփոխել՝ շարադրելով նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման № 3 հավելվածի:

3. Հավանություն տալ Ընկերության կողմից ներկայացված ռադիոհաղորդումների և ռադիոհաղորդումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման նախահաշվի փոփոխությանը՝ համաձայն սույն որոշման № 4 հավելվածում ներկայացված նախահաշվի:

4. Հիմք ընդունելով սույն որոշման 1-3-րդ կետերի իրականացումից բխող, ինչպես նաև Ընկերության ընթացիկ գործունեության հետ կապված այլ դրամական մուտքերն ու ելքերը և եկամուտներն ու ծախսերը՝ հաստատել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2018թ. դեկտեմբերի 28-ի № 49-Լ որոշմամբ հաստատված Ընկերության եկամտի աղբյուրների և ապրանքների/ծառայությունների ձեռքբերումների նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 5 հավելվածի, եկամուտների և ծախսերի նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 6 և դրամական հոսքերի նախահաշվում կատարվող փոփոխությունները՝ համաձայն սույն որոշման № 7 հավելվածի:

5. Սույն որոշման պահանջների կատարումը հանձնարարել Ընկերության գործադիր տնօրենին:

6. Սույն որոշման 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված փոփոխությունները գործողության մեջ դնել 2019 թվականի մայիսի 1-ից:

7. Սույն որոշման 2-րդ կետով սահմանված փոփոխությունները գործողության մեջ դնել 2019 թվականի հունիսի 1-ից:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

29 ապրիլ, 2019 թվականի

ք. Երևան